

## 71. ԱՂՎԸԵՍԸ ՆԱՆ ԿՅՈ̈ՒԼԸ

Մին աղվըես, մինգյել մին կյո̈ւկ ըխպըրանում ըն։ Աղվըեսն ասում ա.—Կյո̈ւկ ախպըեր, էք սօր քու հաշվիտ ապրենքյ։ Կյո̈ւկն ասում ա՝ լա՛վ։

Հղե յըն ինո̈ւմ, քյինա̈մ։ Շատ ըն քյինա̈մ, թա խըեգյ, հա̈նգի ըրըծելիս մին եղն ըն տըեսնում։ Քյինա̈մ ըն մուտանում։ Կյո̈ւկն ասում ա.—Աղվըես ախպըեր, ըշկըերես էշի, տըես լամըու մնան նի յա՞ կենում։ Աղվըեսը էշում ա, տըեսնում կյո̈ւկին աշկըերը կըտըրըելան կըրմըրա̈լ ա, ասում ա.—Հա՛, կյո̈ւկ ախպըեր, ընչուկ-նըետ դիքյ-դիքյ վըեննն ա կացալ, մազըրըտ բարղնըրու մնան ցըեց ա կացալ։ Կյո̈ւկն անց ա կենում ըղվըեսին քամակը, ասում.—Աղվըես ախպըեր, տըես հա̈քյիս դուրըա յա՞ տըեռալ, քամակըս քյինամ ա-կյա՞մ։ Աղվըեսն ասում ա.—Հա՛, կյո̈ւկ ախպըեր, հա̈քյիտ դուրըա յա տըեռալ, քամակըտ քյինամ ա-կյամ։ Կյո̈ւկն ասում ա.—Հա՛, աղվըես ախպըեր, մեհենգյ էշի, տըես հի՞նչ պի-տի անըեմ։ Ասում ա, մեհետ լոք տամ, ծառս ինո̈ւմ, եզանը պը-կան փըռնում, տինո̈ւմ տակըեն, հախըռամիշ անում, մին լա̈վ օտում, մոշոտը մաշին պըրանվում չերը ըո̈նըը։

Մին օր կյո̈ւկն ըղվըեսին ասում ա.—Դե, մեհենգյ հերթը քոնն ա, տըեսնանք հինչ ըս անում։

Հղե յըն ինո̈ւմ, քյինամ։ Շատ ըն քյինա̈մ, թա խըեգյ, մին ծի յա պըտահում։ Քյինա̈մ ըն մուտանում, աղվըեսն ասում ա.—

Կյուլ ախպըեր, էշի տըես աշկերըս լամբու մնան լուս ա՞ տամ։ Կյո̈ւլը տըեսնում ա, վըեր ըղվըեսին աշկերը իսկի յըլ փոխվալ չի, ասում ա.—Չէ՛, աղվըես ախպըեր։ Աղվըեսն ասում ա.—Քու հինչ պե՞նըտ ա, ասըե՝ կըրմըրա՛լ ա։ Կյո̈ւլն ասում ա.—Դե լա՛վ, նըղանալ միլ, կըրմըրա՛լ ա։

Մինգյել աղվըեսն ասում ա.—Կյո̈ւլ ախպըեր, էշի տըես ըն-ջուկնես գիթյ-գիթյ վըեննը ը՞ն կացալ, մազըերըս ըըղնըերու մնան ցըեց ը՞ն կացալ։ Կյո̈ւլը էշում ա, տըեսնում ըղվըեսին ընջուկնեն գիթյ-գիթյ վըեննը չըն կացալ, մազերը ըըղնըերու մնան ցըեց չըն կացալ, ասում ա.—Չէ՛, աղվըես ախպըեր, ընջուկնետ գիթյ-գիթյ վըեննը չըն կացալ, մազըերըտ ըըղնըերու մնան ցըեց չըն կացալ։ Աղվըեսն ասում ա.—Քու հինչ պե՞նըտ ա, ասըե՝ ընջուկ-նետ գիթյ-գիթյ վըեննը ըն կացալ, մազըերըտ ըըղնըերու մնան ցըեց ըն կացալ։ Կյո̈ւլն ասում ա.—Դե լա՛վ, նըղանալ միլ, ընջուկ-նետ գիթյ-գիթյ վըեննը ըն կացալ, մազըերըտ ըըղնըերու մնան ցըեց ըն կացալ։

Աղվըեսն ասում ա.—Կյո̈ւլ ախպըեր, անց կաց քամակըս։ Կյո̈ւլն անց ա կենում ըղվըեսին քամակը։ Աղվըեսն ասում ա.—Կյո̈ւլ ախպըեր, էշի տըես հաքյիս դուրըս յա՞ տըեռալ, քամակըս քյինամ ա-կյա՞մ։ Կյո̈ւլը տըեսնում ա, վըեր ըղվըեսին հա̈քյին դուրըս չի տըեռալ, քամակը քյինա̈մ չի-կյամ, ասում ա.—Չէ՛, աղվըես ախպըեր, հա̈քյիտ դուրըս չի տըեռալ, քամակըտ քյինա̈մ չի-կյամ։

Աղվըեսն ասում ա.—Քու հինչ պե՞նըտ ա, ասըե՝ հա̈քյիտ դուրըս յա տըեռալ, քամակըտ քյինամ ա-կյամ։ Կյո̈ւլն ասում ա.—Դե լա՛վ, նըղանալ միլ, հաքյիտ դուրըս յա տըեռալ, քա-մակըտ քյինամ ա-կյամ։

Աղվըեսն ասում ա.—Կյո̈ւլ ախպըեր, դե մեհենգյ տըես հի՞նչ ըմ ըննական։ Ասում ա, համ էլ լոք-լոք ընըելավ բիղի ծին մուտա-նում։ Ծին ըղվըեսին կլխըեն մին հունց քացի յա տամ, վըեր աղվըեսը բոյավը մին մըեկնվում ա։

Կյո̈ւլն ասում ա.—Աղվըես ախպըեր, մեհենգյ, վըեր աշկըե-րըտ կըրմըրա՛լ ա, ընջուկնետ գիթյ-գիթյ վըեննը ըն կացալ, մազըե-րըտ ըըղնըերու մնան ցըեց ըն կացալ, հա̈քյիտ դուրըս յա̈ տըե-ռալ, քամակըտ էլ քյինա̈մ ա-կյամ։